



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



թիւ 24.

ՊԱՆՏՅՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆԻ

**ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ**  
**ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ**

ԲՍՑՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍ ՔԱՆՆԵԻՉՈՐԱՅԻՆՈՐԳ

28 ՄԱՅԻՍ 1871



ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ

ՏԵՊԳՐՈՒԹԻՒՆ Թ. ՄԻԻԷԷՆՏԻՍԵԱՆ

— 1871 —



# ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ԲԱՑՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ԻԴ.

28 ՄԱՅԻՍ 1871.

ՆԱԽԱԳԱՀ. — ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԲ

ԱՏԵՆԱՊԵՏ. — Ս. ԱՂԱԲԷԿԵԱՆ ԷՅԷՆՏԻ (Բ. Ատենապետ)

## ԿԱՐԳ ԽՆԴՐՈՑ

- 1° Հրաժարական Ազգային Վարչութեան :
- 2° Ատենական կանոնադրութիւն :
- 3° Վերաքննութիւն Սահմանադրութեան :
- 4° Տարեկան համարատուութիւն Ազգային Վարչութեան :

Ատենապետ էֆ. Նախագահ Սրբազանի հաւանութիւնն առնելէ ետեւ՝ ատենադ ըստ ժամ 7ին 'ի ներկայութեան 38 երեսփոխանաց, որոց թիւը հետզհետէ բազմանալով 54ի յանգեցաւ :

Ընդհանուր ժողովոյ վերանորոգման Գործադիր Յանձնաժողովոյ կողմէ երեսփոխանական նորոգ ընտրութեան յայտագիր մը հաղորդուած էր Գիւանին, նոյնպէս քանի մը երեսփոխանաց կողմէ ուղղուած հրաժարեր կային. բայց ըստ որում այս խնդիրներն իրենց որոշումն ընդունելու համար մեծագոյն մասի ներկայութեան կը կարօտէին, Ատենապետ էֆ. զանոնք նշանակեց միայն, եւ խօսքն Ատենադպիր էֆ. ին տուաւ նախընթաց նիստի ատենադրութեան համար, որ հաղորդուած չ'էր երեսփոխանաց :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Նախորդ նիստի ատենադրութիւնը թէ եւ պատրաստ էր, բայց ցաւալի դէպքով մը չը կրցաւ անոր տպագրութիւնն աւարտիլ եւ ըստ սովորականին ժողովոյ գիտողութեան ներկայանալ : Չորեքշաբթի աւուր Բերայի եւ Ղալաթիոյ մէջ միանգամայն պատահած հրդեհներուն եւ մի եւ նոյն պահուն

ուրիշ մէկ քանի թաղերու մէջ նոյնպէս հրկիզութիւններ սկսած ըլլալուն տարածայնութեանց պատճառաւ, տպարանի գործաւորները ցրուեցէին, որով տպարանը դոց մնաց ճիշդ այն ժամունքերք ատենադրութեան տպագրական սրբադրութիւններն եղած էին եւ երեսները կապուելով թերթերը մամուլի ներքեւ պիտի դրուէին :

Երեսփոխան էֆէնտիններն այս անակնկալ պատճառը լսելէ ետեւ՝ անշուշտ ներողամիտ կ'ըլլան պատահած թերութեան, որ Գիւանին կամքէն անկախ պարագաներէ ծնունդ առաւ :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Այդ պատճառը կըրնայ իրաւացի լինիլ, բայց հաւանական չ'երեւիր : Պօլսոյ մէջ ստէպ հրկիզութիւններ կը պատահին, ուրեմն հարկ պիտի ըլլայ ամեն անգամ ատենադրութեանց տպագրութիւններն ետ ձրգել : Պօլսոյ մէջ բազմաթիւ տպարաններ կան եւ օրական թերթեր կը տպագրուին, նոյն հրկիզութեան օրն առնօք ամենն ալ ժամանակին հրատարակուեցան : Դժար չ'էր Ընդհանուր ժողովոյ ատենադրութիւններն ալ ուրիշ տպարանի մը յանձնել եւ տպագրութեան թերթն լրացնել :



ԱՏԵՆԱԳՊԻՐ ԷՖ. — Եթէ սովորական կարգի հրդեհ մ'ըլլար այն օրուան դէպքը, Օգոստէն էֆ. ի գիտողութիւնն իրաւացի կը լինէր, սակայն նոյն օրը Ղալաթիա գտնուողներուն ամենն ալ քաջ կը յիշեն այն ընդհանուր սարսափն ու սոսկումը որ պաշարած էր ամեն կողմ Տպարանին գործաւորները՝ որք ընտանիք եւ տուն տեղ ունին, երբ խնաման թէ իրենց թաղին մէջ հրդեհ կայ, ի հարկէ չ'են կրնար անտարբեր կենալ եւ գործին զլիւն չը մեկնիլ:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Ստոյգ է, սակայն Մանդու մէ լրագիրն ալ նոյն օրը հրատարակուեցաւ, թէ եւ իւր սպարանը Ղալաթիա կը գրտնուի, թէ եւ իւր թերթը ձեր ատենագրութեանց մեծութիւնն ունի:

ԱՏԵՆԱԳՊԻՐ ԷՖ. — Եթէ Օգոստէն էֆ. ըսել կ'ուզէ թէ աւելի արագութեամբ գործող տպարաններ չ'են պակտիր, թերեւս իրաւացի է իւր խօսքը. սակայն մեր խնդրոյն հետ վերաբերութիւն չ'ունի ժողովոյն Գիււանդ գծողութեան առիթ մ'ունեցած չ'էր ցարդ այս տպարանէն, եւ չ'էր ալ կրնար մարդարէանալ այն անակընկալ տարօրինակ դէպքն ու կանխաւ ուրիշ միջոցներ ձեռք առնուլ:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ատենագրութեանց կանոնաւորութեան մասին Ատենագիր էֆ. ի տարած խնամքն անուրանալի է եւ չ'նորհալիութեան արժանի: Միայն թէ հարկ չը կայ որ անոնց տպագրութիւնը մինչեւ չորեքշաբթի օրն երկարաձգի. մանաւանդ ինչպէս կարելի է մնացորդ սուղ միջոցին մէջ զանոնք ժամանակին երեսփոխանաց ձեռքը հասցնել:

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Ստուգիւ շատ ազէկ կ'ըլլայ որ ատենագրութեանց հրատարակումը նիստին նախորդ աւուր չը մնայ:

ԱՏԵՆԱԳՊԻՐ ԷՖ. — Տարակոյս չը կայ թէ լաւագոյն է որ ատենագրութիւններն առանց վերջին օրերուն մնալու պատրաստուած ըլլան, ինչպէս նախագահ Սրբազան եւ Ղազարոսեան էֆ. կը գիտեն, սակայն Ատենագրւորը վերջապէս իւր անձնական գործոց չափ կարեւորութիւն կու տայ իւր պաշտօնին եւ խնամ կը տանի, այնուհետեւ ալ ազատ է իւր խղճին առջեւ:

Ատենագիրը չ'ուզէր ատենագրութեանց արդի գրութեամբ պատրաստութեան բազմաձիգ գծուարութիւնները թուել, եւ սակայն չ'ըսպաւէր ալ որ ժողովն այս օրինակ մանրակրկիտ ըննադատութեանց ելնէ:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ատենագիր էֆ.

խիստ հողածու է իր պաշտօնին, որուն համար ինձ հետ շատեր կրնան վիայել: Ես ՚ի մօտոյ ծանօթ ըլլալով անոր փութաջանութեան եւ գործոյն յարակից գծուարութեանց, չ'եմ կարծեր թէ ժողովն անորմէ գանդատելու տեղի եւ տուած բացատրութեանց վրայ կատկածելու տրամադրութիւն ունենայ:

ԱԼԱՃԱՃԵԱՆ Զ. ԷՖ. — Կ'առաջարկեմ որ նախորդ եւ ներկայ նիստերու ատենագրութիւնները միանգամայն ժողովոյն վաւերացման ներկայանան յաջորդ նիստին, եւ վերջ տրուի այս բանախօսութեան:

ԱՏԵՆԱԳՊԻՐ ԷՖ. — Գիււանդ ըստ ինքեան նախանձախնդիր է իւրաքանչիւր նիստի ատենագրութեան յաջորդ նիստին ընդունելութեան ներկայանալուն, եւ այդ նախանձախնդրութեան գործնական ապացոյցն ալ բաւական ատենէ ՚ի վեր տուած է:

ԵՆՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՖ. — Ստուգիւ փափաքելի է որ Ընդհանուր ժողովոյ ատենագրութիւններն ամենօրեայ պարբերական թերթերու նման արագութեամբ հրատարակուին, այնպէս որ այսօրեայ նիստի ատենագրութիւնը վաղը երեսփոխանք տպագրեալ ունենան ՚ի ձեռին, սակայն քանի որ ինչպէս շատ անգամ կրկնուած է՝ մեր ազգային Գիււանատունը դեռ եւս սղագրութեան եղանակ մը չ'ունի, քանի որ երեսփոխաններն առանց այս գլխաւոր պակասն ՚ի համար առնելու ատենագրութեանց մէջ ոչ միայն բանի, այլ եւ բառի իսկ ճշդութիւն եւ գործին յատուկ կատարելութեան ամեն պայմանները կը պահանջեն, իրաց այս վիճակին մէջ, ատենագրական արդի գրութեան մէջ, խիստ ծանր է եւ դժուարին փափաքուած նպատակին հասնիլ:

Անոնք որ ատենագիրի պաշտօն վարած կամ խմբագրութիւն ըրած են երբէք, դիւրաւ կը հասկընան այս գործին անասելի դժուարութիւնները: Ուստի քանի որ Ատենագիր էֆ. այս ամեն դժուարութեանց հետ կը մաքառի եւ գոհացուցիչ արդիւնք կը ներկայացնէ, պէտք է որ ժողովն անոր արժէքը ճանչնայ եւ այնքան խրատապահանջ չ'ըլլայ, մանաւանդ այս տեսակ պարզաներու մէջ՝ երբ թերութիւնն անոր կամքէն անկախ կը գտնուի:

Ատենագրէտ էֆ. վերջ կու տայ խնդրոյն, յանուն Գիււանդի յայտարարելով թէ յառաջիկայ նիստին երկու ատենագրութիւնք միանգամայն ժողովոյն վաւերացման պիտի ենթարկին. հետեւապէս կ'անցնի օրուան կարգին եւ Քաղ.

ժողովոյ հրատարականի խնդիրը ձեռք կ'առնու:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ ԱԶԳ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ԻՓԷԿՃԵԱՆ Զ. ԷՖ. — Քաղ. ժողովոյ ընտրութեան շատն պայման գրուել է որ մինչեւ Սահմանագրութեան վերաքննութիւնը վերջանայ, պաշտօն վարէ ժողովը. եւ հիմա քանի որ գեռ վերաքննութեան գործը աւարտած չ'է, Քաղ. ժողովոյ հրատարականն ըստ իս անընդունելի է եւ անժամանակ:

ԵՆՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՖ. — (Յանու Քաղ. ժողովը) նախընթաց նիստին մէջ արդէն Քաղ. ժողովը փութաց մեկնելու թէ ինչու ցաւարտ վերաքննութեան պաշտօն վարելու տրամադիր գտնուելէն ետեւ՝ հիմա կը քաշուի պաշտօնէ: Քաղ. ժողովն երբ յանձն առաւ զայն, կը յուսար որ վերաքննութեան գործը քանի մը ամսէն կ'աւարտի, սակայն իրերը այնպիսի գանազան գարձուածքներ առին որ գործն սկսաւ երկարաձգիլ, հետեւապէս Քաղ. ժողովը պարտազանցութիւն չը համարեց վարչական տարեգրելիէն օգուտ քաղել եւ հրատարիլ պաշտօնէ: Իւր համարատուութեան տպագրեալ տեղեկագիրն որ դժբաղդաբար այսօր չը հասաւ՝ յաջորդ նիստին կը ներկայանայ եւ այն ատեն ժողովն իւր անօրէնութիւնը կ'ընէ:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Օրուան կարգը չ'որս խնդիր կը բերէ մեզ, որոնցմէ մինն է Վարչութեան համարատուութիւնը: Այս նիստին համարատուութեան տպեալ տեղեկագիրը, ինչպէս Եուսուֆեան էֆ. ծանոց, չը կրցաւ ժողովին ներկայանալ. ընապէս հրատարականի խնդրոյն լուծումն ալ հարկ կ'ըլլայ ետքի թողուլ եւ չ'որոշել զայն, մինչեւ որ համարատուութեան տպեալ տեղեկագիրը երեսփոխանաց ձեռքը չը հասնին:

ԲԻՒՐԳՅԻՊԱՇԵԱՆ Բ. ԷՖ. — Համամիտ եմ Ղազարոսեան էֆ. ի կարծեաց եւ կ'ըսեմ թէ՛ քանի որ Վարչութեան համարատուութեան տեղեկագիրն եկած չ'է, անոր հրատարականն ալ չը կրնար ընդունելի ըլլալ:

ԻՓԷԿՃԵԱՆ Զ. ԷՖ. — Ես չ'եմ ըսեր ընաւ որ Քաղ. ժողովոյ մեծապատիւ անդամը հրատարական տալով պարտազանց կ'ըլլան, այլ միայն կը յիշեցնեմ այն պայմանը՝ որ ժողովոյ պաշտօնատարութեան պայմանաժամը գծեր է անոր կազմութեան ատեն: Քաղ. ժողովն, ինչպէս Եուսուֆեան էֆ. կը յայտարարէ,

կարծեր է թէ վերաքննութիւնը չ'ուտով կ'աւարտի, եւ այս տեսութեամբ տրամադիր գրտնուել է ցաւարտ վերաքննութեան՝ պաշտօն վարելու, բայց իրաց հակառակ ընթացքը տեսնելով ստիպուել է հրատեչտ տալ պաշտօնէ: Կարելի չ'է յառաջ բերուած այդ պատճառը հրատարականի իրը հիմնական պատճառ մը ընդունիլ, եւ անոր վրայ հրատարական մը հիմնել: Եուսուֆեան էֆ. մեղի չափ զիտ թէ ինչ պատճառներու համար վերաքննութիւնն երկարեցաւ. այս ծանօթ պատճառներէն զատ՝ Ընդհանուր ժողովոյ շատ նիստերուն մէջ ընաւ Սահմանագրութեան խօսքը եղած չ'է. ժողովինը չ'է այս յանցանքը՝ կըրնար տաս տարի ալ տեւել վերաքննութեան գործը. ուստի չ'եմ կարծեր որ Եուսուֆեան էֆ. Ընդհանուր ժողովը յանդիմանելու նպատակաւ մէջ բերած ըլլայ այդ պատճառը: Արդ՝ կ'առաջարկեմ որ Քաղ. ժողովոյ հրատարականը չ'ընդունուի, եւ ցաւարտ վերաքննութեան իւր պաշտօնը շարունակէ:

ԵՆՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՖ. — Կը ցաւիմ որ Քաղ. ժողովոյ հրատարականին նկատմամբ ըրած մէկ խօսքս կատկածի ստուեր մը ձգեց, եւ թիւրիմացութեամբ կարծել տուաւ թէ Սահմանագրութեան վերաքննութիւնն երկարելուն համար Ընդհանուր ժողովը մեղադրելու զիտում ունեցած ըլլամ. ես ալ ժողովոյ անդամներէն մինն եմ եւ հեռի յինէ՛ այս դատաստարտութեան գաղափարը:

Եթէ Քաղ. ժողովն իւր պաշտօնի անցած օրը կը կարծէր թէ վերաքննութիւնը քանի մը ամսէն կ'աւարտի, այն ատեն միայն իրը չ'էր այս կարծիքը, այլ նոյն իսկ Ընդհանուր ժողովն ալ այսքան միջոց հերիք կը համարէր վերաքննութեան, եւ Քաղ. ժողովն այս ընդհանուր կարծեաց առջեւ, որ նաեւ տեսակ մը խոստում էր, տրամադիր գտնուեցաւ ցաւարտ վերաքննութեան պաշտօն վարելու: Տարակոյս չը կայ թէ այս քննութեան երկարացումն իւր բաղմադիրն պատճառներն ունէր, զորս ես չ'եմ վերագրեր Ընդհ. ժողովոյն. սակայն Քաղ. ժողովը տեսնելով որ իւր պաշտօնատարութեան պայմանաժամը կարծուածէն աւելի երկարելէ ետեւ՝ դեռ եւս անստուգութեան մը մէջ է, տարեգրելի առիթէն օգուտ քաղեց եւ իւր համարատուութեան տեղեկագիրն հետ մատոյց իւր հրատեչտը: Եւ Քաղ. ժողովն այսպէս վարուելով կը կարծէ թէ Սահմանագրութեան սկզբան համաձայն վար.



ուած է ինք, եւ թէ իւր հրաժեշտը ճիշդ մ'է նաեւ վերաքննութեան գործը փութացնելու:

ՊԵՎԵԱՆ Թ. ԷՅ. — Քաղ. ժողովոյ հրաժարականի խնդիրն որու վրայ զանազան կարծիքներ կը ծրագրուին՝ Սահմանադրութեան վերաքննութեան խնդրէն թէ եւ առաջ անցած է որուան կարգին մէջ եւ իբր այն իւր առանձին լուծումը կ'ենթադրէ, սակայն այս երկու խնդիրներն իրարու ընապէս հաղորդ են անբաժան. այնպէս որ եթէ ժողովոյ իմաստութիւնն այս կէտը չը նախատեսէ՝ ընդ հուպ նոր դժուարութիւն մը պիտի ելնէ իւր ընթացից առջեւ: Եթէ Ընդհ. ժողովը Քաղաքականին հրաժեշտը ընդունելով ըստ առաջնոյն 6 անդամէ բաղկացեալ նոր ժողով մը կազմէ, եւ եթէ 'ի վերջոյ' ինչպէս կարծիք մը կայ՝ Սահմանադրութեան 99-րդ դրուածին համաձայն որոշէ վերաքննութիւնը կատարել, այն ատեն իրաց ընական հետեւութեամբ հարկ պիտի ծագի վերստին 14 հոգի ընտրել եւ Քաղ. ժողովոյ թիւն ամբողջացնել. իսկ եթէ՝ ինչպէս ուրիշ կարծիք մը կ'ուզէ՝ վերաքննութիւնը Ընդհանուր ժողովոյ մէջ կատարուի, այն ատեն Ընդհանուր ժողովը կրնայ ցաւարտ վերաքննութեան Քաղ. ժողովոյ շարունակել տալ իւր պաշտօնը, եւ կամ դարձեալ 6 անձէ բաղկացեալ առ ժամանակեայ ժողով մը կազմել, ինչպէս որ հարկը պահանջէ: Ընդհանուր ժողովն այս մտածումով հարկ է որ կանխաւ Սահմանադրութեան վերաքննութեան եղանակն որոշէ, եւ անկէ անցնի Քաղ. ժողովոյ հրաժարականի եւ ընտրութեան խնդիրները լուծելու: Այս է աւաստիկ իմ առաջարկութիւնս:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՅ. — Եթէ ուշադիր ակնարկ մը նետենք ժողովոյ ատենադրութեանց վրայ, պիտի տեսնենք որ հոն նշանակութեան արժանի խօսք մը կայ բազմիցս կրկնուած. այն է՝ «գործադրութեան մէջ գտնուած Սահմանադրութեան գոյութիւնն եւ գործադրութիւնը չը խոստովանի եւ իւր մէջ մի քայլը անոր որոշած դժին վրայ ուղղել չ'ուզէ. ուրեմն ոչ եւս Ընդհանուր ժողովը Սահմանադրութենէն դուրս հեղինակութիւն մը ունի վարչական կամ հանրական իրեր ըստ պարագայից որոշելու եւ օրէնսդրական փոփոխում մը ընելու: Այլ հեղինակութիւնն օրէնքինն է բացարձակապէս. պարտաւոր էք համակերպիլ անոր անմուռնջ, պարտաւոր էք 'ի գործ դնել զայն անփոփոխ. եթէ չ'էք ուղեր այսպէս ընել, կը հարցնեմ, ինչ կը նշանակէ ուրեմն «գործադրութեան մէջ գրտ-

նուած Սահմանադրութիւն» խօսքը, որու վրայ կոթնելով վերաքննութեան վերաբերեալ այն որոշումը տուիք, եւ որու համար ժողովէն հրաժարող իսկ եղաւ:

Եթէ կ'ուզէք հիմա Սահմանադրութենէն դուրս օտարոտի միջոցներ փնտռել եւ շեղիլ անոր տրամադրութենէն, քուէ տուած պիտի ըլլաք Սահմանադրութեան դադարման եւ անգործադրութեանը: Այդ քուէին չ'եմ մասնակցիր ես: Ճշմարիտը կ'ուզէք, մերթ Սահմանադրութիւնը գործադրելի է ըսել եւ անոր կէտ առ կէտ հետեւելու ձգտիլ, մերթ ասոր հակառակը վարուիլ եւ Ընդհանուր ժողովոյ ձեռաց մէջ դնել Սահմանադրութենէն անկախ օրէնսդրական քմահաճ հեղինակութիւն մը, սանձարձակ բռնաւորի մը կարգը կ'անցնէ զմեզ. եւ այս հերիք չ'է, նաեւ անել ճամբու մը կ'առաջնորդէ:

Ժամ է արդ որ յիշուի քանի մը նիստ առաջ ժողովոյ այս մասին ըրած Չերմ վիճաբանութիւնն ու որոշումը, եւ Սահմանադրութիւնն շղէկ կամ գէշ գործադրուի, յորմէ ամօթ կը բերէ մեզ շեղիլ:

ՊԵՎԵԱՆ Թ. ԷՅ. — Չ'եմ կրնար ըմբռնել թէ որու կ'ակնարկեն այդ խօսքերը: Ես դեռ հաստատապէս որ եւ է կարծիք չը յայտնեցի եւ ինչ որ խօսեցայ թէական էր, իրաց նախատեսութեամբն էր: Ընդհանուր ժողովոյ կամքէն կանխում ունի Քաղ. ժողովոյ հրաժարականն ընդունիլ կամ մերժել, սակայն վերաքննութեան եղանակը չ'որոշուած՝ հրաժարականի խնդիրն յուզել անպատեհ է եւ դժուարութեանց ենթակայ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Դիտել կու տամ ատենաբանից որ վիճաբանելի խնդիրը Քաղ. ժողովոյ հրաժարականն է, եւ ատենական ընդհանուր կանոնք չ'են ներեր մեզ անկէ այս աստիճան շեղիլ եւ տարբեր խնդիրներով զառամիլ. բայց եթէ ժողովն իւր մեծագոյն մասամբ որոշէր խնդրոց դասակարգութիւնը փոփոխել, այն ատեն ներելի կ'ըլլային քիչ մ'առաջ մէջ բերուած խնդրէն օտար դիտողութիւնները. սակայն ժողովն այնպիսի կամք մը չը յայտնեց, ուստի ատենաբան էֆէնտիններուն կ'ազդարարեմ որ խնդրոյն շրջանէն չը շեղին:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՅ. — Սահմանադրութեան գործադրութեան մասին Օգէն էֆ. ի ըրած դիտողութեան համամիտ եմ ինչ ինչ թէութեամբ, բայց Քաղ. ժողովոյ հրաժարականի մասին իմ կարծիքս այն է որ՝ ինչպէս արդէն

լոսի՝ համարատուութենէն վերջը լուծուի:

ԻՓԷԿՃԵԱՆ Է. ԷՅ. — Կը դարձանամ որ խնդիրն մինչդեռ Քաղ. ժողովոյ հրաժարականին վրայ է, Սահմանադրութեան վրայ խօսք կը դառնայ եւ Գիւանը թոյլատուութիւն կ'ընէ: Ժողովը պէտք է նախ Քաղ. ժողովոյ հրաժարականի խնդիրն որոշէ, եւ շատ գիւրբին է այս Սահմանադրապէս երկու տարի կը սեւէ անոր պաշտօնը, եւ ասորիլ ամայ վերջն իւր համարատուութեան տեղեկագիրը կը մատուցանէ եւ հրաժեշտ կ'ուտայ. սակայն Քաղ. ժողովոյ պաշտօնի անցիլը գեռ երկու տարի չ'եղաւ, հետեւաբար Քաղ. ժողովոյ համարատուութիւնն որ իւր օգուտներն ունի եւ թերեւս Սահմանադրութեան ինչ ինչ մասերը կը լուսարանէ՝ կ'ընդունինք եւ իւր հրաժարականը կը մերժենք: Քաղ. ժողովն ալ եթէ Սահմանադրութիւնն իւր հրաժարականին հիմն բռնել ուզէ՝ այսպէս պիտի մտածէ եւ իւր պաշտօնը շարունակէ մինչեւ իւր երկամեայ պայմանաժամին լրումը: Իսկ վերաքննութիւնը ժամ յառաջ աւարտելու համար ամենուս ալ պարտքն է աշխատիլ, եւ անոր ցարդ երկարելուն համար աւելորդ է այս կամ այն անձին օձիքէն բռնել եւ այս պարագային մէջ դանի պատասխանատու հրատարակել: Չ'եմ կարծեր որ Քաղ. ժողովը՝ դայս ամենը գիտնալէ ետեւ՝ իւր պաշտօնը շարունակելու ղեկակի:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ. — Իմ կարծիքս յայտնելու համար նախ կ'ուզեմ գիտնալ թէ ինչնիւթի վրայ պիտի ըլլայ վիճաբանութիւնը, վասն զի Պէկեան եւ Խօճասարեան էֆ. ներք մէկ մէկ խնդիր յարուցին Քաղ. ժողովոյ հրաժարականի խնդրոյն մէջէն, եւ այս երեքը միանգամայն կ'ըսկսին յուզուիլ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Քանի որ ժողովոյ մեծագոյն մասը խնդրոց կարգը փոփոխելու արամադիր չ'երեւիր, խօսքը Քաղ. ժողովոյ հրաժարականին վրայ է եւ անկէ դուրս եղած խօսքերը չեղումներ են, զորս 'ի կարգ բերելու համար արդէն ազդարարութիւն ըրի:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՅ. — Քաղ. ժողովն իւր համարատուութեան տեղեկագիրը բերաւ, սակայն Կրօնական ժողովը ո՛չ տեղեկագիր ունի եւ ո՛չ իր անունը կը յուրի: Պէտք էր որ անոր ատենապետն ալ հոս ելնէր, իւր պաշտօնատարութեան համարը տար եւ ժողովոյ տեղեկագիրը տպագրեալ հաղորդէր երեսփոխանաց: Առանց ասոր թերի կը մնայ Վարչութեան համարատուութիւնը եւ այս թերին

աննշան բան մը չ'է:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՅ. — Քաղ. ժողովոյ հրաժարականին առջեւ երկու տեսակ ապարկութիւն յարուցին, սրժեր մի եւ նոյն ծանր հետեւութիւնն ունին: Կարծիք մը կայ որ կ'ըսէ, Քաղ. ժողովոյ հրաժարականն անընդունել մինչեւ որ վերաքննութիւնը չ'աւարտի, եւ պէտք է որ մինչեւ այն ատեն շարունակէ նա իւր պաշտօնը. ուրիշ կարծիք մ'ալ կ'ըսէ, մինչեւ համարատուութիւնը չը վերջանայ հրաժարականի խնդիրը չը յուզուի եւ Քաղ. ժողովը շարունակէ իւր պաշտօնը: Այս եզրահակաւ ճշման ներքեւ պիտի դուրս կամ Սահմանադրութեան վերաքննութիւնը կամ Քաղ. ժողովոյ համարատուութիւնը: Ընդհանուր ժողովոյ մէջէն կուսակցութիւն մը թերեւս Վարչութեան ընդդիմադիր՝ իւր ջուղած մարդոց հրաժեշտը փութացնելու համար պիտի աճապարէ կամ վերաքննութիւնը կամ համարատուութիւնը չուտով լմեցնելու, որով այս երկու կարեւոր խնդիրները կարճ պիտի կազմուին եւ հարեւանցի շօտիւսին: Թող ներեն ինձ Վարչութեան մեծապատիւ անդամք, զի մեր խօսքը իրենց անձին զէմ չ'է, այլ սկզբան զէմ:

Վերաքննութիւնը շիտեւի Քաղ. ժողովոյ հրաժարականին հետ, անոր իմաստը շիտեւի է: Եթէ կ'ըսեն էֆ. ի դիտողութեան համաձայն իբր սահմանադրական սկզբունք կ'ընդունին որ երկու տարուան վրայ չափուի Քաղ. ժողովոյ պաշտօնատարութեան շրջանը: Ետտ արդէկ. սակայն միթէ Քաղ. ժողովն ալ օրինաց արամադրած ընտրութեան ձեւն ու թիւն ունի: Ընտրութեան ձեւը նոյն իսկ Ընդհանուր ժողովը տուաւ եւ կը յարգեմ զայն. իսկ թիւը լրացնել սղեք է, մանաւանդ որ Սահմանադրութեան վերաքննութիւնն ունինք մեր առջին եւ որոշում մը կայ այս մասին արուած: Այս որոշման համաձայն վերաքննութիւնը կատարելու համար Քաղ. ժողովոյ մէջէն 3 անգամ պիտի առնենք, ըսել է ժողովին կէտը, եւ չը գիտեմ թէ մի պիտի վարէ այն ատեն Քաղ. ժողովոյ պաշտօնը: Վերջապէս եթէ Քաղ. ժողովոյ հրաժարականն անընդունելի դատուի՝ պէտք է անոր թիւը սահմանադրապէս լրացնել, իսկ եթէ ընդունուի անոր յաջորդն անպատճառ 20 անձէ կազմել:

ՈՍԿԱՆ Յ. ԷՅ. — Եթէ Քաղ. ժողովոյ համարատուութեան տպագրեալ տարերը մեր ձեռքը գտնուէին եւ ժողովը բաւական լուսաւորուած



ըլլար այդ մասին, կրնայինք Քաղ. Ժողովոյ հրաժարականի խնդիրը յուզել. սակայն քանի այդ անգեկագիրը մէջ տեղը չ'է՝ անպատեհ է այդ, եւ հրաժարականի խնդրոյն վրայ ս'ըբան պերճախօս ատենաբանութիւններ ալ ըլլան յուժապէս կ'երթան:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ. — Պահ մ'առաջ հարցուցի թէ ս'րն է յուզուած ննդիրը, եւ Կիւսիս ըստ թէ Քաղ. Ժողովոյ հրաժարականի խնդրոյ նիւթ եղած է եւ շեղում մ'է տարբեր նիւթի վրայ խօսիլ, եթէ Ժողովը կամք չը յայտնէ: Սակայն կը ատենեմ որ ուրիշ խնդրոց վրայ խօսք կը դառնայ:

Օղտէն էՖ. Ժողովոյ ատենագրութեանց ակնարկելով յիշեցուց թէ՛ Սահմանագրութեան գործադրութիւնը Ժողովն ընդունած է՝ մանաւանդ վերջէն առած որոշմանը վրայ. եւ հետեւ ցուց թէ պէտք է Սահմանագրութեան արամագրութեանց համաձայն վարուելով Քաղ. Ժողովոյ անդամոց թիւը 20ի վերածել: Օղտէն էՖ. յարուցած խնդրոյն վրայ հարկադրեալ կը գտնեմ զիս մտածել եւ հարցնել թէ՛ արդեօք վերաքննութեան խնդրոյն քուէարկուելէն ե՞տեւ մտաւ Սահմանագրութիւնը գործադրութեան մէջ, Այսպէս մտածելու իրաւունք ունիմ, որովհետեւ Օղտէն էՖ. ի փաստերուն բովանդակ նեցուկը կը գտնեմ ասկէ առաջ վերաքննութեան մասին Ժողովոյս առած մէկ որոշումը. մանաւանդ երբ կը ատենեմ որ Օղտէն էՖ. այն աստիճան սահմանագրական նախանձախնդրութիւն մը ցոյց կու տայ եւ անոր բառական ճշգրտ գործադրութիւնը կը սրահանջէ այսօր, որուն օրինակը եւ ոչ մի երեւոյթանաւորութիւն Օղտէն էՖ. էն լսելուս վրայ ուրախ եմ: Իսկ եթէ ուրիշ գիտեամք մի այս յայտարարութիւնները կ'ընեն, մինչեւ այն աստիճանները յուզուելու եւ շփոթուելու եւ իրեն հետ ուրիշներն ալ յուզուելու եւ շփոթուելու անգի չը կայ: Ժողովը քաջ գիտէ արդէն թէ այն քուէն ի՞նչ բանի հաւարտուաւ, այն քուէն զօրութիւնն անժամանակ վերաքննութեանը դաշարման ակնարկող օտարտի միջոցները մերժեց եւ ազգային ինքնօրինութիւնը հաստատեց: Հարկ կը համարիմ բացատրել թէ ի՞նչպէս կ'ըմբռնենք Սահմանագրութիւնը, ի՞նչ է անոր ոգին եւ սկզբունքը, եւ թէ ի՞նչ է Սահմանագրութեան բառական գործադրութեան խնդիրը՝ զոր Օղտէն էՖ. այժմ կը յարուցանէ: Եւ որ երեսօրնախնութեան նախորդ կազմութեան միջոցին

չատ մը գծաւարութիւններ յարոյց, եւ մինչեւ իսկ բառին համար ողին եւ սկզբունքն ալ չը յարգուեցաւ: Ազգային երեւոյթանութեան տասնամեայ շրջանի արձանագրութեանց եւ Ազգային Վարչութեան հին ու նոր բոլոր արձանագրութեանց մէջ զեղերած ըլլալով, այդ մասերուն վրայ բառական անգեկագրութիւն առած եմ: Կը խօսիմ ասոնց եւ մանաւանդ այս բառական գործադրութեան խնդրոյն վրայ, եթէ Կիւսիսը Ժողովին կամքը հարցնելով, խնդրոց կարգն ըլլալը բարեհաճի ինձ իմայնել:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Կը պարտաւորիմ քանի մը կէտերու համառօտիւ պատասխանել: Նախ՝ Ատենագրութիւն պաշտօնին պայմաններէն մինն է նաեւ Ժողովոյ որոշումները յարգել տար Ասկէ առաջ Ընդհանուր Ժողովը Քաղաքական Ժողովոյ անդամոց թիւը 6 ի զեղջեր եւ նորա ընտրութիւնն իւր կողմէ՛ նախագահ Սրբազանին յանձնել է, եւ այս եղանակաւ Քաղ. Ժողովը կազմուելով հաստատուել է Ընդհանուր Ժողովոյ կողմէն: Թէ ի՞նչու եզեր է այս անօրէնութիւնը եւ ի՞նչ է անոր շարժառիթը՝ Ընդհանուր Ժողովը լաւ գիտէ եւ աւելորդ է հարցնել: Երբ հարկը պահանջէ այս որոշումը կը գործադրուի անփոփոխ, քանի որ զայն եզրօղ ուրիշ որոշում մը չը կայ:

Երկրորդ՝ հրաժարականի խնդրոյն գալով, նախորդ նիստին մէջ որոշուեցաւ խնդրոց կարգը անցնել զայն, հետեւ ապէս պէտք է նախ որոշել թէ արժան է զայն ընդունիլ կամ ոչ, եւ երկրորդ՝ անդամոց թիւը նոյնը պահել թէ աւելցնել:

Երրորդ՝ վերաքննութեան խնդիրը հրաժարականի խնդրոյն հետ յարաբերութիւնն չ'ունի ինչպէս Օղտէն էՖ. կ'ըսէ. սակայն Ժողովոյ կամաց կը գիտէ Կիւսիսը եւ եթէ որոշուի կրնայ խնդրոց կարգը պէտք եղած փոփոխութիւնը կրել:

Չորրորդ՝ Քրիստոստուր էՖ. Արժանական Ժողովոյ համարատուութեան անգեկագիրը կ'ուզէ՝ նախագահ Սրբազանը յատուցագոյն յայտնեց ինձ թէ Արժանական Ժողովոյ համարատուութիւնն իւր պատասխանատուութեան ներքեւ կ'անու եւ այդ մասին խօսքն իրն է: Սակայն բուն խնդիրը Քաղ. Ժողովոյ հրաժարականին վրայ է հիմայ եւ դարձեալ կը հրատարակուանարան էՖ. ներք չը չեղիլ անկէ:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՅ. — Ըսին թէ մինչեւ որ Քաղ. Ժողովոյ համարատուութիւնն աւարտի Քաղ. Ժողովը վարէ իւր պաշտօնը: Ասոր ան-

պատեհութիւնը բացատրեցի, սակայն ուրիշ հասկնալի կերպով մ'ալ կ'ուզեմ խօսիլ:

Ննթաղրելով որ Քաղ. Ժողովն իւր հրաժարանն համարատուութեան անգեկագիրը տալէն ետեւ՝ զեւ եւս ամիս մը պաշտօն վարէ եւ վարչական անօրէնութիւններ ու գործողութիւններ ընէ, ասոնց համարն ո՞վ պիտի տայ միթէ յաջորդին ստ'որքն է պատասխանատու ըլլալ այս գործոց, քանի որ նա միայն իւր գործոց պատասխանատու է:

Իսկ անոնք որ կը կարծեն թէ Սահմանագրութեան ոգին իրենց ձեռքն է եւ պարագային համաձայն կրնան օրէնքն եւ իրերը մեկնել, թող ձեռքերն իրենց խղճին վրայ դրնեն եւ վայրկեան մը յիշեն այս մասին բրած նախորդ խօսքերնին: Եթէ Սահմանագրութիւնը գործադրութեան մէջ է, անոր պէտք է հետեւիլը:

ՊԵՏԵԱՆ Թ. ԷՅ. — Ոմանք կը կարծեն թէ խնդրէն դուրս ելած եմ, բայց ես կ'ըսեմ թէ խնդրոյն շրջանին մէջն եմ, քանի որ Քաղ. Ժողովոյ հրաժարականն ու Սահմանագրութեան վերաքննութեան խնդիրն անբաժանելի առնչութիւն մը ունին իրարու հետ: Իսկ Օղտէն էՖ. ի առարկութեանց դալով Փափաղեան էՖ. խիստ իրաւացի կերպով տուաւ պատասխանը: Օղտէն էՖ. կը սիւզէ որ Սահմանագրութիւնը կէտ առ կէտ գործադրուի, կոթնելով Ընդհանուր Ժողովոյ Սահմանագրութեան վերաքննութեան մասին առած որոշման վրայ. սակայն այն որոշումն ինչպէս Փափաղեան էՖ. ըսաւ՝ վերաքննութեան կը վերաբերի միայն եւ անոր ազգեցութիւնը չը տարածիր Քաղ. Ժողովոյ կազմութեան եւ օւրիշ խնդրոց վրայ: Ժողովը՝ եթէ հարկ համարի կրնայ հաստատել Քաղ. Ժողովոյ մասին իւր առած որոշումը եւ խնդրել անկէ որ իւր պաշտօնը շարունակէ ցլիք վերաքննութեան: Ատենագրութիւն էՖ. յայտարարեց թէ Ժողովոյ որոշումը յարգել պիտի տայ, ուստի կը խնդրեմք որ ըստ այնմ շարժի:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ. — Օղտէն էՖ. կը կարծէ թէ Քաղ. Ժողովը Սահմանագրութեան կաշմուած չ'է եւ թէ անոր հրաժարականը պէտք է ընդունիլ, եւ այս մասին զմեզ մեր խղճին դատաստանին կը յանձնէ: Թո՛ղ ապահով ըլլայ Օղտէն էՖ. թէ մեր խղճը շատ հանդարտ է այդ մասին. մենք իր ըրած անտութեանը եւ հանած հետեւութեանը վրայ չ'ենք կրնար հիւսնել Քաղ. Ժողովոյ հրաժարականն ընդունիլ կամ մերժելը. անոր կազմութիւնը քննադատու-

լու, ձեւն ու թիւը հաշուոյ առնելու այժմ ոչ պէտք կը ատենենք եւ ոչ ալ անկէ օգուտ: Նոր ընտրութեան մէջ այդ խնդիրները կրնան յուզուիլ, եւ Ժողովոյս զխնայիք բանն է այդ մասին ինչ որոշում ապրը:

Ազգային Ժողովս Քաղ. Ժողովոյ հրաժարականը խնդրոց կարգն անցնելով, արդէն իմացուցած եղաւ թէ Սահմանագրութեան բառերուն հետեւելու միտում չ'ունի, այլ ողոյն եւ սկզբանցը, ինչպէս մինչեւ զարդ հետեւեցաւ. վասն զի եթէ բառերուն պիտի հետեւէր, ի՞նչ հարկ կար այժմ խնդիր յարուցանել հրաժարականի մասին: Վարչութեան երկամեայ համարատուութեան ատենն է, Քաղ. Ժողովը համարը պիտի տայ եւ քաշուի, զի վերջնաբերի չ'են ըստ Սահմանագրութեան բառին:

Իսկ անոնք որ մինչեւ վերաքննութեան աւարտիք Քաղ. Ժողովոյ պաշտօն վարելուն որոշուած ըլլալը կ'առարկեն, պէտք է դիտեն թէ այս միջոցը ս'ըջափ կ'երկարի: Մինչեւ անգամ եթէ Ժողովս այսօրուրէն վերջացուցած ըլլար վերաքննութիւնն եւ Բ. Կրան յանձնած, գտնէ տարի մը պէտք էր կարծեմ կայսերական հրամանն ստանալու, եւ տարի մ'ալ զայն գործադրութեան շրջանի մէջ մտցնելու համար:

Անցնինք համարատուութեան խնդրոյն: Համարատուութիւնը միայն պիտի կրնայ մեզ գիտցնել թէ Վարչութեան Կիւսիսին վրայ ի՞նչ խնդիրներ կան, ի՞նչ անօրէնութիւններ եղած են. եւ թէ ազգային կառավարութեան զեկը ի՞նչ անասկ մարդոց ձեռք յանձնել պէտք է: Անոնք որ համարատուութեան վերջը կ'ուզեն հրաժարանի խնդիրը յուզել եւ լուծել, կարծեմ այս անտութեանը մանաւանդ կ'ըմբռնեն խընդիրը, եւ իրաւունք ունին:

Եթէ հիմա հապճեպով առանց իրաց վիճակին վրայ հասուն գաղափար մտնենալու՝ նոր Քաղ. Ժողով մ'ընտրենք, այն Ժողովը պաշտօնի անցած ատեն՝ չը պիտի դիտնայ վարչական օրուան խնդրոց վրայ Ընդհանուր Ժողովոյ կարծիքն եւ պիտի գրկուի այն դասէն՝ զոր բարձրագոյն Ժողովոյ քննադատութիւնները պիտի աւանդեն իրեն: Վերջապէս ամեն պարագայ եւ մտածում իրաւունք կու տայ ինձ փափաքելու որ, եթէ կարելի է, Քաղ. Ժողովն առ առաւելն մինչեւ յառաջիկայ տարուոյն մայիս Ա իւր պաշտօնը շարունակէ, շարունակելով այժմ իր համարատուութիւնը, որ



կրնայ շատ օգտակար ըլլալ վերաքննութեան խնդրոյն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Թէեւ խնայելու կարգը Քրիստոսաւոր էֆ.ինն է . բայց անոր խօսք տալէ առաջ պարտ կը համարիմ նախագահ Սրբադասնի մէկ առաջարկութիւնը ժողովին ներկայացընել : որ ներկայ խնդրոյն հետ վերաքննութիւն ունի :

Դեռ ատենը չը բացուած՝ Նորին Սրբազնութիւնն առաջարկեց որ, ամառուան եզանակին մէջ ազգայինը օդափոխութեան առթիւ ցրուեալ ըլլալուն պատճառաւ, Ընդհանուր ժողովն երկու ամսոյ չափ ընդհատի եւ յառաջիկայ օգոստոս ամսէն սկսեալ վերստին շարունակուի : Քաղ. ժողովոյ ալ առաջարկեր է Նորին Սրբազնութիւնն որ մինչեւ այն ատեն բարեհաճի իւր պաշտօնը շարունակել . եւ այս միջոցին մէջ համարատուութեան տեղեկագիրն ալ ամբողջ կը արգարտի, երեսփոխանաց կը ներկայանայ : Այս առաջարկութիւնը յայտնելէ ետեւ զխտել կուտամ որ Քաղ. ժողովոյ հրաժարականի խնդիրն որոշելէ առաջ ընտրական պարագաներու մէջ մտնել : վերաքննութեան հետ զայն կապել եւ խնդիրներու զանգուած մը կազմել, աւելորդ է եւ իրաց ելքը կը դժուարացնէ : Աստի եթէ ժողովն առաջարկուած երկամսեայ դադարը չընդունիր, պէտք է հրաժարականի խնդիրը լուծէ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Քանի Քաղ. ժողովոյ հրաժարականի խնդիրն յուզուի, պիտի կրկնեմ միշտ որ ամենէն առաջ համարատուութիւնը պէտք է վերջանայ եւ այնուհետեւ հրաժարականի եւ ընտրութեան խնդիրներն իրենց լուծումն ստանան : Համարատուութիւն բառն արտասանեցի, եւ ահա՛ կրօնական ժողովը դարձեալ կը յիշեմ, ո՛ւր է անոր տեղեկագիրը : Ստոյգ ազրիւրէ իմացայ որ Թարբերչու մէջ բողոքականութիւնն սկսեր է ծաւալել եւ այնքան յաջողութեամբ որ բողոքական քարոզիչները Հայոց եկեղեցիներուն մէջ ազատ համարձակ մուտ գտեր, եւ եկեղեցւոյ բեմէն եւ նոյն իսկ հայ եկեղեցականաց ներկայութեան սկսեր են պարզմտ ժողովուրդն ի բողոքականութիւն յորոգել : կրօնական ժողովոյ համարատուութեան տեղեկագիրը հետաքրքրութեամբ կը փնտնեմ, այս անցքերուն վերահասու լինելու համար, որոնք ի խորոյ կը յուզեն զիս . . .

Ատենապետ էֆ. կ'ընդմիջէ ատենախօսք եւ

յայտնելով թէ խնդրէն կը շեղի ՚ի կարգ զառնալ կը հրաւիրէ զինքը :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — (Խօսից թելը յետո՛ւնելով) Այս փութը իրողութիւնը նշանակելով կրօնական ժողովոյ համարատուութեան տեղեկագիրն հարկաւորութիւնը կ'ուզեմ հաստատել, եւ կ'առաջարկեմ որ ով որ է պատասխանատուն համար տայ յանուն նոյն ժողովոյն իսկ Ընդհ. ժողովոյ նիստերն ընդհատելու մասին եղած առաջարկութեան երբէք համամիտ չ'եմ եւ ժողովն ալ արամադիր չ'եմ տեսներ զայն ընդունելու : Եթէ նախագահ Սրբազանը փատառողջ է եւ զբաղեալ, կրնայ ինք սակաւ ինչ հանգիստ առնուլ, եւ ժողովն առժամանակեայ նախագահով մը շարունակել իր նիստերը, ինչպէս արդէն պատահած է երբեմն :

ԽՕՅԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Ի՞նչու խնդիրն այսչափ չ'փոթութեան մէջ զնել : Ընդհանուր կուտան է որ հրամեշտ սուտղ դեւ է պաշտօնեայ կամ մարմին, իր արդիւնք կը յանձնէ նոյն պաշտօնին վերաբերող ամեն բան : Եւ արդ ինչ հարկ կայ Քաղ. ժողովոյ հրաժարականին ընդունելութիւնը եւ անոր յաջորդին ընտրութիւնը այս կամ այն պատճառներով ետ ձգել :

Մենք կ'ըսենք՝ եթէ Ընդհ. ժողովն իրմէ ընտրուած մարմնոյ մը կրցաւ ասկէ առաջ տարօժն ծնունդ եւն. ըսելու, նոյնը ամենուրեւ համար ալ կրնայ ըսել, եւ երբ չ'ուզէք այսպէս ընդունիլ ըսել կ'ըլլայ որ այն ատենի քուէարկութեան մէջ ձեր հետեւած սկզբունքին դէմ կը բողոքէք . . .

(Բողոքող խմբի խնդրէն շեղելու համար)

ԵՐԱՆՈՒԹԵԱՆ Տ. ԷՖ. — Կը զարմանամ որ իմ պաշտօնակիցներէս ոմանք երբ ուրիշները կը մեղադրէին խնդրէն շեղելուն համար, իրենք ալ հետացան անկէ : Հաւանօրէն կրնայ ժողով մը սխալիլ, ծուռ քայլ մը առնուլ, սակայն ինչ հարկ կայ սակայ անցեալին դառնալ, նախորդ որոշում մը քննադատել, կատարուած իրողութեանց դէմ խիզախելով մրցիլ, որ եթէ արդէն սխալում մը կայ դործուած՝ նոր մ'ալ զայ յաւելնայ անոր վրայ :

Հերիք է որ ամեն ոք հանդարտ ու անկեղծ ողբով դատէ իրերը եւ օրուան պիտոյքն որոշէ, կրնայ խնդիրն իր բուն վիճակին վերածել : ձշմարտութիւնը մի է, եւ զայն քննութեամբ կարելի է ձեռք բերել ժողովին առջեւ հրաժարականի խնդիր մը կայ անփոփոխան անօրէնութեան կարօտ . այնպիսի դարձումքով մը

կը յուզեն զայն, որպէս թէ Քաղ. ժողովն առանց իւր գործոց համարը տալու ՚ի փախուստ կ'աճապարէ : Արքան հետէ այս իրողութեանէն Քաղ. ժողովը նախնեաց նիստին մէջ մատոյց Ընդհանուր ժողովոյ իւր համարատուութեան տեղեկագիրը եւ անոր բովանդակութիւնն ընթերցաւ հրամեշտ տալով պաշտօնէ :

Շատերն ուղեցին որ հրատարակութեամբ հարգուի իրենց այդ ստուար տեղեկագիրը, բայց տպագրութիւնը չը հասաւ . եթէ հասած ըլլար Քաղ. ժողովը Ձեր դատաստանը պիտի խնդրէր անոր վրայ, սակայն Քաղ. ժողովը մինչեւ համառարութեան վերջը չը կրնար ամիսներով սպասել եւ պաշտօն վարել, մանաւանդ որ նոյն իսկ Առանձնագրութեան համաձայն երբ ազրիւն վերջը Քաղ. ժողովը լուծուի, մայիսի սկիզբը նորը կ'ընտրուի եւ կը յաջորդէ իրեն : Այս է բոլոր վարչութեանց ընթացքը . ամեն պաշտօնական մարմին իւր գործոց պատասխանատու կը մնայ միշտ, թէ իւր պաշտօնին վերելք եւ թէ հետի դաժնուի, ո՛ւր որ ալ ըլլայ՝ բարձրագոյն աստիճան զատուած զինքը կը գտնէ եւ կը հարուածէ, եթէ զեղծում մը գործած է նա : 1863ին Քաղ. ժողովը իննամսեայ համարատուութեան տեղեկագիր մը տուաւ, առանց պատասխանատու ըլլալու իւր նախորդին 13 ամսուան պաշտօնավարութեան գործողութեանց : Քաղ. ժողովը տարեգլխին առթիւ իւր համարատուութիւնը ներկայացնելէ ետեւ կը հրաժարի . Քաղ. ժողովոյ ամենէն մեծ փառքն է իւր գործքերը ձեր ազատ քննադատութեան ենթարկել եւ ձեր դատաստանն իմանալ, զան զի ապահով է թէ կրնայ ըլլալ որ քննադատութեան ենթակայ զանազան կէտեր գտնուին . որոց վրայ որչափ խիստ ալ ըլլայ ձեր դատաստանը՝ երբէք չը պիտի կրնայ Քաղ. ժողովոյ հաւատարմութիւնը կասկածի ենթարկել, կամ իւր անդամոց ազգասիրական զգացումներն արատել : Աստի քանի որ Քաղ. ժողովը հրաժարած է, կը յուսամ թէ իրաւունք ունի այս պարագայիս մէջ, առանց համարատուութեան վախճանին սպասելու՝ իւր համարատուութեան ծրագիրը երեսփոխանաց ներկայացընելէն անմիջապէս ետքը, պատկառելի ատենիդ դատաստանը խնդրել իւր գործողութեանց բովանդակութեանը վրայ, եւ ապա մասնաւոր քննադատութեան ենթարկել :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Առաջարկեմ որ Երեսփոխան էֆ.ի առաջարկութիւնը քուէի գրուի Համարատուութեան վրայ նախ ընդհանուր

դատաստան մ'ըլլայ եւ յետոյ հրաժարականի խնդիրն յուզուի :

1863 ին համարատուութիւնը թէ եւ արդուեցաւ եւ երեսփոխանաց հաղորդուեցաւ, բայց Ընդհ. ժողովը զայն քննութեան չ'առաւ : Այս առաջին անգամն է որ Ընդհանուր ժողովը վարչական գործոց համարը պիտի առնու օրինաւորապէս : Երբ համարատուութեան տեղեկագիրը տպագրեալ կու գայ եւ ժողովն իր ընդհանուր դատաստանը կ'ընէ, այնուհետեւ հարկ տեսած խնդրոց համար կրնայ զանազան յանձնաժողովներ կազմել եւ անոնց մանրամասն քննութեան ենթարկել զանոնք : Այսն զի ինչպէս ըսի՝ այս առաջին անգամն է որ Ազգային ժողովս իր ներքին գործոց համարը պիտի առնու, ՚ի հարկէ անոնց վրայ պիտի զբաղի . ըստ որում եթէ Առանձնագրութեան էական պայմաններէն մին՝ երեսփոխանական ժողովոյ կազմութիւնն է, միւս պայմանն ալ՝ համարատուութիւն եւ համարատուութիւնն է :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Փափագեան էֆ. ի խօսքին վերջին մասը, որ առաջարկութիւն մ'է, մեծապէս բացատրութեան կը կարօտի :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ես միայն զիտողութիւն ըրի եւ ոչ թէ առաջարկութիւն : Խօսքիս սկիզբը Քաղ. ժողովոյ Առանձնագրի էֆ. ին առաջարկութիւնը կրկնեցի միայն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Վարչական գործոց ընդհանուր քննութիւն կամ դատաստան ընել եւ ապա Քաղ. ժողովոյ հրաժարականին վրայ որոշում տալ երկար ժամանակի կարօտ գործեր են . Դիւտնը չը կրնար այսպիսի առաջարկութիւն մը ըմբռնել եւ Վարչութեան հրաժարականն այս սկզբան վրայ հիմնել :

ՆԱԽԱԳԱՋ ՍՐԲԱՋԱՆ — Անգամ մը երբ Ընդհանուր ժողովոյ Դիւտնին դէմ բուռն յարձակում մ'եղաւ՝ առիթ ունեցայ ժողովականաց զիտել տալու թէ՛ ազգային պաշտօնատարաց հետ այնպիսի շարաչար կերպով կը վարուին, որպէս թէ իրենց վարձկան ծառաները լինին անոնք : Դժբաղդաբար այս զիտողութեանս իմաստը զեռ հասկցուած չ'երեւիր եւ յարձակումները կը կրկնուին :

Ընդհանուր ժողովը քաջ պէտք է գիտնայ թէ պաշտօնական մարմիններու վրայ իւր ունեցած իշխանութիւնն եւ իրաւունքը մինչեւ ո՛ւր կը յանդի . եւ թէ Ազգին այս անձնուէր աշխատաւորներուն ի՞նչ արիւտը եւ պատուանշան կը շնորհէ . որպէս զի իւր դատաւարատութիւնն ալ համեմատի վարձատրութեան աստիճանին



հետ եւ մին գծումն չը դերագանցէ :  
 ԽՅՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՑ. — (Ընդդէմ) Ընդհանուր ժողովոյ գոհունակութեան քուէն պատուանանէն մեծ է, եւ ազգային պաշտօնատարները նոյն արժէքով կ'ընդունին զայն :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Հայոց Ազգին վիճակն ինչպէս կը ներէ՝ այնպէս պէտք է վարուիլ ազգային պաշտօնատարաց հետ, որպէս զի առանց լքանելու գոհունակ սրտով շարունակեն իրենց անձնուէր ծառայութիւնները : Եթէ Ընդհանուր ժողովը յարձակողական գիրք մը բռնէ եւ անողոքա զէս խճրճէ ամեն ինչ, անձնութեան ոգին որ մեր միակ նեցուկն է, կը չիջանի Ազգին մէջ եւ առաջուր կը կոխուի : Այլ ոք այնուհետեւ կը համարձակի պաշտօն ըստանձնել, ժողովոց անդամակցիլ եւ յարձակմանց նշաւակ լինիլ : Նտեւարար Արքայութեան անիւր կը կաշկանդուի :

Կրօնական ժողովոյ համարը կը պահանջուի ինձմէ : Քանի մը անգամ հրախրելով զայն Խառն ժողով կազմեցի, սակայն անկէ անգին չը կրցիլ գումարելու աւասիկ իմ պատասխանս ինչ որ ալ հարցուի այս մասին ուրիշ ըսելիք չ'ունիմ :

Այնպէս կ'ըրբանեմ ես որ Ազգին մէջ պաշտօն վարողներն արժանի են քաջակրթութեան մի կարծէք թէ Ընդհ. ժողովն ալ Տէրութեան ատեաններուն նմանութիւնը կը բերէ : Աւետարանի ատեանն է այս, հոս յարձակումն եւ մեծամեծս խօսիլն անտեղի են, եւ մանաւանդ գործոց յառաջադիմութեան փաստաբեր : Կրօն ժողովոյ համարը կ'ուզուէր ինձմէ, ես ալ Ընդհանուր ժողովոյ 23 նիստերու համարը պիտի պահանջեմ :

(Իժեհն յընդմեջ)

ԻՆՏԻՆՃԵԱՆ Կ. ԷՑ. — Քաղաքական ժողովոյ հրաժարականը հարկ է ընդունիլ թէ մերժել, աւասիկ այս կէտին վրայ կը դառնայ խնդիրը : Ընդհ. ժողովն երկուքէն որն ալ որոշէ, 'ի հարկէ իւր շարժառիթը պիտի ունենայ, եւ որ երեսան պիտի ելնէ՝ երբ ժողովն համարատուութեան տեղեկագրին վրայ ընդհանուր ակնարկ մը նետէ :

Կը յուսամ որ ժողովոյն կարծիքը նպաստաւոր պիտի ըլլայ Քաղ. ժողովոյ պաշտօնատարութեան ընթացքին վրայ եւ կը վստահիմ որ իւր պաշտօնը շարունակէ նա, սակայն հարկ է որ ա՛նչ երեսփոխան համարատուութեան արգակողական տեղեկագրին 'ի ձեռքն ունենայ, եւ ժողովոյ մէջ գէթ անոր վրայ առաջին ակնարկ մը ձգուելէ ետեւ հրաժարականի խնդիրն յուզ-

ուի, որով դերութեանը կրնայ լուծում մը ձեռք բերուիլ :

ՊԵՆԵԱՆ Թ. ԷՑ. — Բուն խնդրոյն վրայ խօսելէս առաջ կ'ուզեմ հակիրճ պատասխան մը տալ Նախագահ Սրբազանին, որ կ'առաջարկէր մեզիս վարուիլ ազգային պաշտօնատարաց հետ եւ անձնութեանը խրախուսել :

Քաղ. ժողովոյ համարատուութեան տեղեկագիրը դեռ եւս մեր ձեռքը հասած չ'է եւ Ընդհ. ժողովը չը գիտէր թէ նա իւր պաշտօնը յուզուա Ազգին արժանապէս կատարած է եթէ ոչ, առանց այս գիտակցութեան ինչ կրնայ ընել Ընդհ. ժողովն եւ ինչպէս պէտք է վարուի Քաղ. ժողովին հետ : Նախագահ Սրբազանին այս խօսքերով համարատուութեան եւ համարատուութեան սկզբունքը կ'ոչնչանայ, թէ եւ Քաղ. ժողովոյ անդամները մեծապէս կը վստահին իրենց գործերը Ընդհ. ժողովոյ քննադատութեան ենթարկելու եւ անոր գոհունակութեան քուէն պատուով կ'ընդգրկեն :

ԽՅՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՑ. — (Ընդդէմ) Ստոյգ է, Քաղ. ժողովն աւելի Ընդհ. ժողովոյ գոհունակութեան քուէին կը վստահի, քան ուրիշ վարձատրութեանց :

ՊԵՆԵԱՆ Թ. ԷՑ. — (Երբեք) Իսկ բուն խնդիրը բաւականէն աւելի բացատրուած է, հրաժարական եւ ընտրութիւն տարբեր են եւ հարկ չը կայ զանոնք միանգամայն յուղելու, վասն զի եթէ Քաղ. ժողովոյ հրաժարականը չ'ընդունուի, ընտրութեան եզանակին վրայ վիճարանելու պէտք չը մնար, եւ եթէ բնականուրէն այն ատեն այդ հարկը կը ծնի : Իսկ ես բնաւ չ'ըսի որ անպատճառ Քաղ. ժողովը պաշտօն վարէ, այլ թէութեան ներքեւ էին իմ գիտողութիւններս :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Քաղ. ժողովոյ հրաժարականի խնդիրը համարատուութեան ապագրեալ տեղեկագրին եկած օրը պէ՛տք է լուծուի, թէ անկէ առաջ : Ահա այս է խնդիրը զոր քուէի կը դնեմ, եթէ ժողովը վիճարանութիւնը հերիք համարի :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Այդ հարցումը՝ զոր քուէի կ'ուզէք ենթարկել, կը պարտաւորէ զիս ուրիշ հարցում մ'ուղղելու : Սահմանադրապէս երբ Քաղ. ժողովն իւր գործոց համարը տայ, տարեկանին անգէն հրաժարեալ պիտի համարուի, եւ Ընդհանուր ժողովն անոր ընթացքն 'ի քննն առնելով իւր գոհունակութեան կամ դժգոհութեան քուէն պիտի տայ, եթէ ոչ՝ պիտի կարգայ տեղեկագրիլ թէ եւ յայտնաւորքի չափ ստուար

ինի, պիտի դատարնէ Վարչութեան մէջ մի արարքը՝ թէ եւ այս քննութիւնն ամիսներու կարօտի, եւ այնուհետեւ հրաժեշտն ընդունիլնս կ'ըսեմ թէ օրէնքն այս մասին ինչ որ կը տրամադրէ, յարգեցէք զայն՝ ըստ այնմ շարժելով :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Եթէ այդ հարցումը գիւտնին կ'ուղղէք՝ աւասիկ, Սրբազան Հայր, անոր պատասխանը, Վեն ժողովոյ պաշտօնատարութեան շրջանը դժուած է Սահմանադրութեան մէջ, երբ պայմանաւոր լրանայ, ժողովը կը դադրի համարը ներկայացնելով, առանց սպասելու որ բարձրագոյն ատեանը կանխաւ իւր արարքը քննադատէ :

Քաղ. ժողովն ալ անցեալ նիստին իւր համարատուութիւնը ներկայացուց եւ հրաժեշտ տուաւ, իւր պաշտօնատարութեան շրջանը լրացած համարելով, սակայն ժողովն այդ հրաժարականի խնդիրն իրր նորեկ խնդիր մը նկատեց եւ ուզեց խնդրոց կարգն անցնել ու այս նիստին յուղել, եւ այնպէս ըրաւ : Բայց հիմա երեսփոխաններէն սեանք տարբեր տեսութեամբ կը ներկատեն խնդիրն եւ համարատուութեան հետ կը լծորդեն զայն : Աւստի կը կրկնեմ որ մինչեւ յառաջիկայ նիստին համարատուութեան ապեալ տեսքերը երեսփոխանաց հաջորդուին եւ նոյն օրը հրաժարականի խնդիրը լուծուի :

ԵՌՆՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՑ. — Քաղ. ժողովն իւր հրաժարականը տուած է արդէն եւ դադրած պաշտօնէ՝ սակայն իւր ընթացքը կ'ենթարկէ Ընդհանուր ժողովոյ դատարնութեանը եւ անոր վճիռը կը խնդրէ : Եթէ այն երեսփոխանները՝ որ գատաստան չ'ըրած Քաղ. ժողովոյ հրաժարականը ընդունիլ չ'են ուզեր, նպատակ ունին Քաղ. ժողովոյ անդամներն՝ եթէ Սահմանադրութիւնը կը տրամադրէ՝ վերընտրելի ընելու, եւ եթէ թող չը տար օրէնքը՝ ասոր համար պէտք եղածը մըտածելու կամ Քաղ. ժողովոյ հրաժարականը բնաւ չ'ընդունելու, այդպիսի պարագայի մէջ Քաղ. ժողովը չը կրնար հաւաքապէս կարծիք մը յայտնել : Իսկ իւր բարանչիւր ժողովականի կամքէն զախումն ունի այդ կէտը :

Ատեանը այս միջոցին ընդհատելով ժողովը պահ մը դադար կ'առնու եւ յետոյ կրկին կը շարունակուի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Յուզուած խնդրոյն վրայ գտնականից խօսք տալէ առաջ՝ պարտ կը համարիմ յայտնել որ դեռ եւս ժողովն իւր օրինաւոր թիւը չը կրցաւ ունենալ, սակայն կէտ մը

կայ այս մասին նկատողութեան արժանի :

Ընդհանուր ժողովոյ անդամներէն Կեր. Տ. Ներսէս Եղիսիպոսու Վարժապետեան առաջնորդական պաշտօնով 'ի Նիկիոմիդիա կը դառնուի, եւ Տ. Մելքիսեղեկ Վարժապետ Մուրատեան երեսփոխան վանքը վերադարձած է : Եթէ այս երկու երեսփոխանները հրաժարեալ համարուին եւ այս թիւը զեղջուի երեսփոխանաց ընդհանուր թիւէն՝ որ 109 ի կը յանգի, այն ատեն Յէ թիւը մեծապէս մաս կը կազմէ եւ ժողովն այս թիւն արդէն ունենայով կրնայ իւր գործը յառաջ վարել : Այս տեսութեամբ կը հրաւիրեմ ժողովն որ իւր կարծիքն յայտնէ :

ԻՓԷԿՅԵԱՆ Զ. ԷՑ. — Ճիշտ մի եւ նոյն գիտողութիւնը պիտի ընէի եւ ես, վասն զի Սահմանադրութիւնը եկեղեցական երեսփոխանաց ընտրութեան գլխին մէջ նոյն իմաստ արամադրութիւն մը ունի, զոր աւասիկ կը կարդամ :

ՅՕԳ. 63. — Կոստանդնուպոլսոյ մէջ գտնուող « Բոլոր եկեղեցականք » Պատրիարքի հրաւիրած նոք ապրիլ ամսոյ վերջը որոշեալ տեղ մը կը գումարուին, եւ դադանի քուէարկութեամբ « ու քուէից բացարձակ առաւելութեամբ Ազգային Ընդհանուր ժողովոյ եկեղեցական անդամները կ'ընտրեն, թէ Եղիսիպոսներէն, թէ Վարժապետներէն եւ թէ Քահանաներէն : Բայց » պէտք է որ ընտրելիք, դուրսըը պաշտօն չ'ունան : » :

ՄԱՐԻՂՄԵԱՆ Տ. ԷՑ. — Այս գաւառները բընական եկեղեցականք չ'են կրնար երեսփոխանական պաշտօն վարել, նտեւապէս յիշեալ երկու երեսփոխանները հրաժարեալ են ինքնօվն, եւ այս խնդիրը պարագան բերաւ այսօր Ընդհանուր ժողովոյ :

ԽՅՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՑ. — Կրօնի թէ Ներսէս Արքազանը Նիկիոմիդիոյ առաջնորդ գանուելուն պատճառաւ սահմանադրապէս հրաժարեալ կը համարուի երեսփոխանական պաշտօնէն, եւ Սահմանադրութեան 63րդ յօդուածը իր փաստ մէջ կը բերեն : սակայն նոյն յօդուածը կը վերաբերի անոնց որ հնարաւորութիւն չ'ունին ժողովին դալու, մինչդեռ Ներսէս Արքազանը աւելէ 6 ժամու ճամբայ հետի է, մինչդեռ Սահմանադրութեան 93րդ յօդուածին արամադրութեամբ առաջնորդ մը կրնայ նաեւ վանահօր պաշտօն վարել երբ մէկ օրուան ճամբայ հետի է վանքը առաջնորդանիստ քաղաքէն : Նոյն յօդուածին արամադրութեան տակ կ'իյնայ նաեւ այս բացակայութեան պարագան, եւ Ներսէս Արքազանը կրնայ երկու պաշտօն միանգամայն



վարել, քանի որ տեղւոյն հեռաւորութեան սահմանը՝ զոր Սահմանադրութիւնը կը գծէ, գիւրութիւն կուտայ այս մասին: Իսկ Մելքիսեդեկ վարդապետին բացակայութեան գալով կ'ըսեմ որ թերեւս ճամբորդութիւն մը կ'ընէ նա եւ ի մօտոյ կը վերադառնայ:

**ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Բ. ԷՖ.** — Այդ երկու երեսփոխանք պաշտօնով դուրսը կը գտնուին, եւ Սահմանադրապէս հրաժարեալ են:

**ԽՕՃԱՍՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ.** — Շատ մեծ անիրաւութիւն մ'է առանց նոյն երեսփոխաններէն բացառութիւն ուղեւու, հրաժարեալ համարիլ որոնք թերեւս կը վարեն իրենց պաշտօնը:

**ԻՌՓՈՒՃԵԱՆ Կ. ԷՖ.** — Օրէնքը այս մասին այնքան մեկին եւ որոշակի կը խօսի որ մեկնութիւն եւ վարանում աւելորդ է: Երբ եկեղեցական երեսփոխան մը առաջնորդական պաշտօնի կոչուելով իւր վիճակը կ'ուղեւորի, կը պարտաւորի առաջին պաշտօնը թողուլ եւ հրաժարեալ կը համարուի:

**ՊԵԿԵԱՆ Թ. ԷՖ.** — Իրաւ է որ Սահմանադրութիւնը այս մասին տրամադրութիւն մ'ունի, սակայն զիտեղ արժան է որ երեսփոխանական ընտրելին դուրսերը պաշտօն չ'ունենայ կ'ըսէ եւ չը արամադրէր որ եկեղեցական երեսփոխան մը դուրսը պաշտօն ընդունելէն ետեւ՝ հրաժարեալ համարուի անպատճառ: Այս կէտը սակաւ ինչ բացատրութեան եւ որոշման կը կարօտի, անկարելի է զայն լուծել այսօր քանի որ մեծազոյն մաս չը կայ:

**ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Բ. ԷՖ.** — Արդէն ասկէջ առաջ ժողովն որոշած է որ երբ երեսփոխան մը առանց հիւանդութեան կամ ճանապարհորդութեան պատճառի երեք անգամ բացակայ զբաղուի, հրաժարեալ համարուի. արդ՝ քանի որ յայտնի է թէ յիշեալ երեսփոխանները բացակայ կը գտնուին առանց այս երկու պատճառներն ունենալու, հրաժարեալ են, եւ հարկ չը կայ խնդրոյ ենթարկել զայս պարագան:

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Ժողովը եթէ համաձայն է այս կէտին մէջ այն ատեն օրինաւոր թիւն ունենալով կրնայ որոշմանց ձեռնարկել:

**ՈՍԱՆ Յ. ԷՖ.** — Ենթադրելով որ յիշեալ երկու երեսփոխանները հրաժարեալ են, տակաւին ժողովը իւր օրինաւոր թիւը չ'ունի, վասն զի արդէն որոշուած է մեծազոյն մասը երեսփոխանաց անձնական ներկայութեան մէջ վերաբերել, եւ չ'է թէ անուանական կերպով կամ ստորագրութեանց մէջ:

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Կը յիշեցնեմ որ այդ տեւ

տակ որոշում մ'եղած չ'է բնաւ: Այն երեսփոխաններն որ ժողովոյն դատով ստորագրած են ներկայութեան տուժարը, թէ եւ նիստը չը վերջացած մեկնած ալ ըլլան կամ ժողովարանին դուրսը գտնուին, միշտ ներկայ կը համարուին, եւ ժողովը պարտաւոր չ'է ստիպել զանոնք որ անպատճառ անշարժ մնան իրենց աթոռին վրայ, ինչպէս որ հիմա եւս շատ երեսփոխաններ դուրս ելած են, զորս չ'եմ կարող ներս գալու բռնադատել:

**ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.** — Սահմանադրութիւնը եկեղեցական երեսփոխանաց ընտրութեան գըլխին մէջ ընտրուելիք՝ դուրսը պաշտօն չ'ունենան կ'ըսէ, հետեւապէս եթէ ներսէս Սրբազանը նոյն իսկ Պօլսոյ մէջ գտնուէր եւ առաջնորդական պաշտօնի կոչուէր, տակաւին ըստ օրինի հրաժարեալ պիտի համարուէր երեսփոխանութենէն: Ասիկայ լուծուած խնդիր մ'է:

Իսկ հրաժարական մ'որոշելու մասին կ'ըսեմ, միթէ ընտրեալ երեսփոխանաց թիւը 100 եղած ժամանակ երբ 31 երեսփոխան հրաժարած ըլլան մնացած 49 երեսփոխանը չը պիտի կրնա՞յն ընդունիլ այն հրաժարականներն ու պէտք եղած որոշումը տալ:

**ՔՈՒՐՔՅՈՒՄԵՏԵԱՆ Բ. ԷՖ.** — Իմ կարծիքս այն է որ՝ զեթ քաղաքապետութեան համար դուրսը գտնուող յիշեալ երեսփոխանաց նախագահ Սրբազանին կողմէ ազդարարութիւն մը ըլլայ եւ այնուհետեւ անոնք հրաժարեալ համարուին:

**ՄԱՋԼԸՄԵԱՆ Յ. ԷՖ.** — Պարզօրէն խօսելով ընդհանուր ժողովն օրէնքը պիտի գործադրէ եւ այս պարագային մէջ որոշում մը չ'ունի ընելիք: Այն եկեղեցական երեսփոխանն որ գաւառին մէջ պաշտօն կ'ընդունի եւ առանց հրաժարական տալու կը մեկնի, հրաժարեալ է արդէն օրինաց ուժովը:

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Կը հետեւի ուրեմն թէ ըստ օրինի հրաժարեալ պիտի համարուին:  
(Բռնէ ԵՅՅԵՐ, Այս, Այս)

**ԽՕՃԱՍՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ.** — Ոչ, ոչ, կը մեղանչէք Սահմանադրութեան դէմ. դուրս բառը վերացական եւ անորոշ է: Ըստ Սահմանադրութեան մէկ օրուան հեռաւորութենէ անդին գտնուած տեղը դուրս է: Ահաւասիկ կը կարգում Սահմանադրութեան նոյն յօդուածը:

**ՅՕԻ. 95.** — Երբ առաջնորդ մը միանգամայն վանահայր ըլլայ, եթէ վանքը միայն մէկ օրուան ճամբայ հետի է առաջնորդանիստ քաղաքէն, կրնայ երկու պաշտօն ալ մէկտեղ վարել երբեմն երբեմն վանքին այցելութիւն ընելով:

Ժողովականաց մէջ շուրջ մը կ'ընթանայ եւ անոնցմէ ոմանք առեւարանին խօսքն ընդմիջել կը փորձեն, սակայն Գիւանը բարեկարգութեամբ կը հաստատէ եւ առեւարանը խօսից թելը ձեռք կ'առնու:

**ԽՕՃԱՍՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ.** — (Երբեք-էրբեք) կը տեսնէք որ օրէնքը դուրս բառին սահմանը կը գծէ եւ մէկ օրէն անդին դուրս կը համարի: Ներսէս Սրբազանը նոյն իսկ մէկ օրուան ճամբու միջոցով ալ հետի չը բնակիր մենէ եւ կըրնայ երկու պաշտօն միանգամայն վարել: Կը մնայ ուրեմն ներսէս Սրբազանէն բացառութիւն ուղեւ թէ կրնայ երեսփոխանական նիստերուն ներկայ գտնուիլ. եթէ կրնայ, խօսք չը մնար մեզ. եթէ ոչ՝ կը հրաժարի:

**ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.** — Օրսէն է՞՞. Սահմանադրութեան մէջ վանահայր համար դրուած յօդուած մը չիօթեց երեսփոխանական ընտրութեան խնդրոյն հետ: Օրէնքը բացորոշ է, դուրսը պաշտօն ունեցող եկեղեցական մը՝ մինչեւ իսկ Պօլսի մէջ ալ գտնուի չը կրնար երեսփոխան ընտրուիլ:

**ՆԱԽԱԳԱՋ ՍՐԲԱԶԱՆ.** — Ես այնպէս կ'ըմբռնեմ որ եկեղեցական մը՝ երեսփոխան ըլլայ կամ ոչ՝ երբ պաշտօն ընդունելով դուրս երթայ, այն գաւառին կը վերաբերի ինք: Եթէ զիւրութիւն ալ ունենայ Պօլս երթեւեկելու եւ ընդհանուր ժողովոյ նիստերուն ներկայ գտնուելու, պէտք է որ գաւառին երեսփոխանն ըլլայ, վասն զի ալ այնուհետեւ Պօլսի գաւառին չը վերաբերիր ինք:

**ՄԿՐԵԱՆ Տ. ՅՈՎ. Է. ԲԷՆ.** — Երբ անցեալ տարի Կ. Պօլսոյ երեսփոխան ընտրուեցայ, թէ եւ ի Պօլս կը գտնուէի, սակայն հոս պաշտօն եւ հաստատուն բնակութիւն չ'ունէի եւ տրամադիր էի մեկնելու: Եկեղեցական Համագումար ժողովին այս պարագան զիտել տուի, սակայն նա յայտնելով թէ քանի որ մէկ աւուր մէջ կրնամ Պօլս գալ, սահմանադրապէս քու ընտրութիւնդ ներեալ է ըսու ինձ:

**ՊԵԿԵԱՆ Թ. ԷՖ.** — Նախագահ Սրբազանը շատ ազէկ բացատրեց: Այն ամեն տեղերը որ Պօլսոյ Պատրիարքին առաջնորդութեան ներքեւ չ'են՝ դուրս կ'ըսուին Իսկ Համագումար ժողովոյն կողմէ Արժ. Մկրեան Հօր տրուած պատասխանն իբր փաստ չը կրնար յառաջ բերուիլ. վասն զի նա իւր ուղած կերպով կրնար մեկնել օրէնքը:

**ԵՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ.** — Ահա՛ Սահմանադրու-

թեան մէկ մթին տրամադրութիւնն ալ՝ որ վերաբնութեան պէտքը վերստին կը յիշեցնէ մեզ: Ես մը կայ, որու սահմանը ընդունայն գրտնելու կը ճգնի ժողովը: Օրէնսդիրը դիտում մ'ունեցեր եւ նշանակեր է զայն. բայց մեկնութեան կը կարօտի: Հետեւաբար անոր ողբոյն պէտք է թափանցել եւ ըստ այնմ քայլել, նիկոմիդոյ, Պրուսայու, Գարիմալի Պօլսէն ունեցած հեռաւորութեան ժամերը հաշուելով՝ չ'եմք կրնար Պօլսոյ սահմանը դժեւր եթէ ընդհանուր ժողովոյ երկատրեկան նիստերը տեղի ունենային, նիկոմիդիա գտնուող երեսփոխան մը պիտի կրնար Պօլս գալ եւ կենալ, նոյնպէս հիմա՝ որ ամեն 15 օրն անգամ մը նիստ կը բացուի՝ կրնայ Պօլս երթեւեկել: Ահա ասոր վրայ մտածելու է, Տարակոյս չը կայ թէ Մելքիսեդեկ Վարդապետին համար անհնար է նիստերուն ներկայ գտնուիլ, երուսաղէմէն Պօլս երթեւեկելով. ուստի ժողովը զանի հրաժարեալ կրնայ համարիլ, իսկ ներսէս Սրբազանը նոյն վիճակին մէջ չ'է, եւ կարծեմ թէ հարկ է միանգամ դիմել իրեն այս մասին իւր կամքն իմանալու համար:

**ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Բ. ԷՖ.** — Օրէնքը պարզօրէն ընտրուելիք երեսփոխանը դուրսը պաշտօն չ'ունենայ կ'ըսէ, եւ Պօլսոյ նկատմամբ դուրս կ'ըսուի այն տեղը՝ որ Պօլսէն անդին կը գտնուի:

**ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.** — Մեր ընթացքը բացարձակապէս կը հակառակի օրինաց ողբոյն, եթէ Սահմանադրութեան 35րդ. յօդուածին համաձայն Պօլսէն մէկ օրուան ճամբայ հետի քաղքի մը մէջ բնակող անձ մը կրնայ Պօլսոյ մէջ երեսփոխանական պաշտօն վարել, նոյն յօդուածին հետեւութեամբ կրնայ նաեւ իւր տեղը փոխանորդ մը զրկել ընդհանուր ժողովին, վասն զի 35րդ. յօդուածը կ'ըսէ:

«Բայց եթէ հեռաւորութիւնն օրուան մը ճամբարէ տեղի ըլլայ, պէտք է որ վանքին մէջ իրեն փոխանորդ մը կարգելով ինք քաղաքը բնակի»:

Հոս կը տանի զմեզ Օգոստէն Էֆէնտի մեկնութիւնը. բայց ինչու այս տեսակ թիւր մեկնութիւններ տալ եւ այլադէմ իմաստ եւ նստակ նշանակել Սահմանադրութեան յօդուածներուն, երբ անդին անոր 70րդ. յօդուածը յայտնապէս կը տրամադրէ որ՝ ընտրեալ երեսփոխանները Կ. Պօլսոյ մէջ բնակին: (Յո՞ւրբեք ո՞ր է թէ եւ Օգոստէն Էֆէնտի) Բայց դուք զարձեալ չուրը ամառին մէջ դրէք ձեռեցէք:

**ԻՓԵԿՏԵԱՆ Է. ԷՖ.** — Երեսփոխաններէն ո-



մանք հերիք չը համարելով Սահմանադրութեան բացորոշ արամադրութիւնը, դուրս բառին սահմանը կը փնտռեն. Պօլիս ալ վիճակ մ'է Արքայան Պատրիարքին առաջնորդութեան ներքեւ եւ 'ի հարկէ՛ Նորին Արքայանութիւնը գիտէ թէ իւր առաջնորդութեան սահմանը մինչեւ ո՛ր կը յանգի. հետեւապէս կը խնդրեմք որ բացատրէ մեզ զայն: Եթէ Պօլսի սահմանն որոշ եղած ըլլայ, ինչո՞ւ ուրեմն վանահօր պաշտօնն երեսփոխանի պաշտօնին հետ կը շփոթեն, կը պընդեն եւ Սահմանադրութեան յօդուածները ծամածոյնով ժողովը ծամալաճառ կ'ընեն ընդունայն: Արդ՝ կ'առաջարկեմ որ յանձնաժողով մը դրուի, որոյ պաշտօնն ըլլայ այդ յօդուածը քննելով արդիւնքը հրատարակելի՝ 'ի դատապարտութիւն անոնց որք պարզ յօդուածը կը խեղաթիւրեն:

**ՊԱՅՄԱՃԵԱՆ Ս. ԷՖ.** — Ներսի եւ զրսի խընդիրները բաւական յուզուեցան, բայց պրոքիւնք մը չը գոյացաւ. այն որ Պօլսոյ մէջ չը քնակիր, ուրիշ գաւառի մը մէջ է, չը կրնար երեսփոխանական պաշտօն վարել: Ըստ իս աւելորդ են այս ամեն խօսքերը:

**ԻԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ.** — Այն տեղը որ Պօլսի վիճակին չը վերաբերիր դուրս կ'ըսուի. Նիկոմիդիա ալ դուրս է, վասն զի աւանձին վիճակ մ'է եւ կուսակալութեան մասնաւոր գաւառ մը:

**ԽՕՃԱՍԵՐԵԱՆ Օ. ԷՖ.** — Իսկիցան կարծեմ բաւական համոզուեցանք թէ մէկ օրուան ճամբու հետադարձութիւնը երեսփոխանի մը գիւրութիւն կու տայ Պօլիս երթեւեկելու եւ իւր պաշտօնը կատարելու:

Արդ՝ եթէ կը պնդէք որ երեսփոխան ընտրուողն անպատճառ Պօլիս բնակի, դէթ անոր սահմանը ցոյց տուէ՛ք: Նիկոմիդիա Պօլսի ստիկանութեան, կուսակալութեան ներքեւ կը դնուի, եւ այս ալ ոչ նուազ ապացոյց մ'է իմ գիտողութեանցս ճշդութեանը: Սակայն դուք կ'ուզէք երեսփոխան մը հրաժարեցնել աւանց իրմէ բացատրութիւն ուզելու, եւ իրաւունք չ'ունիք:

**ՆԱԽԱԳԱՆ ՍՐԲԱԶԱՆ.** — Գաւառաց մէջ պաշտօն վարող երեսփոխաններն ըստ օրինի հրաժարեալ են, եւ եթէ խնդիրը քուէի ալ դրնէք, թէեւ հարկ չը կայ, դարձեալ արդիւնքը չը տարբերիր օրինաց պահանջումէն: Այս պարագային մէջ վճիռ մը չը կայ արուելիք աւանց դատաստանի, դատարարութեան խնդիր չը կայ: Գուրս բնակող անձն երեսփոխան չը կրնար ըլլալ:

լալ, Օրինադիրքը վճռած է արդէն:

Այս պահուս նորեկ երեսփոխան մը ժողովարանէն ներս կը մտնէ եւ ներկայութեան տուածարին գլուխը կու գայ ստորագրելու, որով ներկայութեան թիւը 33ի կը հասնի եւ ժողովը իր օրինաւոր թիւը կը գտնէ:

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Եւ հի՞՞՞՞՞ որ մեծագոյն մասը գոյացաւ, ըստ որում օրը ասարժամած եւ ֆաղաքական ժողովոյ հրաժարականի խնդրոյն վերայ արդէն բաւական վիճարանութիւն կը գտնէ, զայն կրկին վիճարանութեան ներքեւ դնելու հարկ չ'եմ տեսներ, այլ մեծագոյն մասին յայտնած կարծեաց համաձայն՝ անոր լուծումը համարատուութեան տպեալ տեղեւիւղիին եկած օրուան կը թողուի, որ յաջորդ նիստին պատրաստ պիտի ըլլայ եւ ֆաղ. ժողովը ալ մինչեւ այն ատեն պիտի շարունակէ իւր պաշտօնը: Ուստի կ'անցնիմ ուրիշ խնդրոց, որպէս զի կարող ըլլանք արշեալ ժամուսն ատեսանը գոցել:

**2. ՎԱԻԵՐԱՑՈՒՄԸ ԵՐԵՍՓՈՒՄՆԱԿԱՆ ՆՈՐՈՂ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ**

Ատենապետ էֆ. Գործադիր Յանձնաժողովոյ մէկ տեղեկագիրը ներկայացուց, որ կը յայտնէր թէ Կեսարիոյ վիճակին կողմէ Մանուկեան Մանուկ էֆ. երեսփոխան ընտրուեք է, եւ Ընդհանուր ժողովոյ վաւերացման կը ներկայացնէր զայն ընտրութիւնն՝ անոր օրինաւորութիւնը հաստատելով:

Ոչ ոք այս ընտրութեան վրայ գիտողութիւն մ'ըբաւ, հետեւապէս Ատենապետ էֆ. քուէի դրաւ եւ ժողովը ընդհանուր հաւանութեամբ հաստատեց Մանուկեան էֆ-ի երեսփոխանական ընտրութիւնը:

Յետոյ Ատենապետ էֆ. երկու երեսփոխանաց հրաժարագրերու խնդիրը ձեռք առաւ:

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Քաղաքեան եւ Միւհէնտիսեան էֆէնտիները ժողովոյ նիստերէն յաջորդաբար երեք անգամ բաղակայ գանուելնուն պատճառաւ՝ իրենց անունն անցեալ նիստին ներկայացաւ ժողովին, սակայն Տօքթէօն ի թիւճեան էֆ. Քաղաքեան էֆ-ի, եւ ուրիշ մ'ալ Միւհէնտիսեան էֆ-ի հիւանդութեանց վիայեցին, հետեւապէս որոշուեցաւ որ վերջնական նամակ ուղղուի իրենց: Ի պատասխան այս անգամ հրաժարական կ'ուղարկեն, առաջինը զա-

նաղան պարագայից, իսկ երկրորդը՝ հիւանդութեան պատճառաւ: Կը հրաւիրեմ ժողովն որ իւր կամքը յայտնէ:

Ոչ ոք գիտողութիւն կ'ընէ այս հրաժարականներուն վրայ եւ ժողովը կ'ընդունի զանոնք:

Յետոյ Ատենապետ էֆ. խօսք կ'առնու բացակայ երեսփոխաններն անուանելու համար:

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Ընդհանուր ժողովոյ նիստերէն,

- Տ. Արիստակէս ՔՅՆ. Մամրէեան
- Չարազեան Յակոբ էֆ.
- Ռուսինեան էֆ.

երեք անգամ յաջորդաբար բացակայ գտնուած են առանց հիւանդութեան կամ ճանապարհորդութեան պատճառի:

Սակայն պէտք է ժողովոյ ուշադրութեան ներկայացնեմ, թէ Ռուսինեան էֆ-ի այս երրորդ անգամ բացակայութիւնը տեղի ունենալէ առաջ, ինչպէս կը յիշէ ժողովն անշուշտ, անցեալ նիստին մէջ՝ անոր երեսփոխանական պաշտօնէ հրաժեշտ տուած ըլլալուն վրայ հարցումներ եղան, եւ 'ի վերջէ՛ ալ տեսնուեցաւ որ Ռուսինեան էֆ. մասնաւոր յայտարարութեամբ հրատարակեց իւր հրաժարականն ու շարժառիթը: Սակայն այս հրաժարումն օրինաւորապէս ներկայցեալ չ'էր ժողովոյն եւ անոր մէջ յուզեալ. հետեւապէս անոր երրորդ բացակայութեամբ ինքնին խնդիրն Ընդհ. ժողովոյ կ'ելաւ: Չ'ուզեցի որ այս պարագան ժողովոյ ուշադրութեան վրայի եւ յիշեցի հոս, վասն զի կարծեմ թէ ժողովը պէտք է նկատողութեան առնու զայն իւր պոչու մը առաջ առաջ:

**ՂԱԶԱՐԱՅԵԱՆ Ք. ԷՖ.** — Ժողովն ըստ օրինի հրաժարեալ կը ճանչնայ երրորդ անգամ բացակայ գտնուողները եւ տարբեր տնօրէնութիւն չը կրնար ընել:

(Քուէ ղ յիշեց, Այո՛. Այո՛.)

Ժողովը յաջորդաբար երեք նիստէ բացակայ գտնուող յիշեալ երեք երեսփոխանները հրաժարեալ կը հրատարակէ:

**ՊԵԿԵԱՆ Ք. ԷՖ.** — Պօլսէն բացակայ եղող այն երկու եկեղեցական երեսփոխանաց հրաժարման խնդիրն ալ պէտք է այսօր լուծուի վերջնայ. զի յաջորդ նիստին կրնայ նոր գըծուարութեանց պատճառ ըլլալ:

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Գուրսը գտնուող երկու

եկեղեցական երեսփոխանաց հրաժարման խնդիրն անցեալ նիստին մէջ Դ. վիճակի վերանորոգումէն ծագեցաւ, եւ անոր հետ լուծուելու համար նախագահ Սրբազանին յանձնուեցաւ պարտու պատշաճ տնօրինութիւնը. հետեւաբար զայն հոս հարկ չ'էր յուզել այսօր, սակայն մեծագոյն մասի չը գոյութիւնն առիթ տուաւ Դիւանին զայն մէջ բերելու եւ այս ամենէն մեծ դժուարութիւնն՝ որ անհար կը գործէ խնդրոց որոշումը՝ բառնալու. այսու ամենայնիւ ալ հարկ չը մնաց ասօր եւ այլ եւս իրերն իրենց բնական կարգով կը տնօրինուին:

**3. ԱՏԵՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ**

**ՆԱԽԱԳԱՆ ՍՐԲԱԶԱՆ.** — Մասնաւորապէս Դիւանէն կը խնդրեմ որ ատենական կանոնադրութիւնն օր առաջ ծրագրէ եւ ժողովին բերէ: Կարծեմ Օտեսան էֆ. ծրագիր մը պատրաստած է արդէն, եւ Դիւանն անոր մայրաքաղաքէս մեկնելէն առաջ կրնայ խնդրել զայն եւ ընդունիլ:

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Ատենական կանոնաց խնդիրը փութով լուծելու եւ ժողովին այս կարեւոր պէտքը ժամ յառաջ լրացնելու համար՝ կ'առաջարկեմ որ յանձնաժողով մը կազմուի եւ անոր յանձնուի ծրագիր մը խմբագրել ու ժողովին բերել: Այսպէսով միանգամ ընդ միշտ կը վերջանայ այս խնդիրը:

Ժողովականաց ոմանց կողմէ կը կրկնուի այս առաջարկութիւնն եւ ժողովը հաւանելով անոր Դիւանին կը յանձնէ յանձնաժողովոյ անդամներն անուանել:

- Հետեւապէս Ատենապետ էֆ. կ'առաջարկէ որ.
- Մէրեթ-Գուլի Յ. էֆէնտի
- Նուսուֆեան Տ. »
- Իրէկճեան Հ. »
- Փափաղեան Ս. »

անգամ կարգուին նոյն յանձնաժողովոյ:

Մէրեթ-Գուլի էֆ. կ'աղաչէ զժողովն որ իւր տեղն ուրիշ անձ մ'ընտրէ, յարելով թէ իր անձնական գործոց համար բազմադրագ վիճակ մ'ունի եւ ազգային ծանր պաշտօններ կան արդէն իր վրայ, որով նիւթապէս ժամանակ կը պակսի իրեն նոր պաշտօն մ'ալ ընդունելու:

Դիւանն ու ժողովը կ'առաջարկեն զՄէրեթ-Գուլի էֆ. յանձնաժողովոյ անդամակցութիւնն ընդունիլ, առարկելով թէ անոր պաշտօնը կարճ միջոց մը կը տեւէ, եւ ուր ուրեմն կը պարտա-



որեն զնա համակերպել ժողովոյ պահանջման ժողովը իւր հաւանութեամբ կը հաստատէ խմբագիր յանձնաժողովին անդամոց ընտրուած թիւը, եւ Ապրիլ 25-էն առաջարկութեան վրայ կը յանձնարարէ յանձնաժողովոյ որ փու-

թով իւր պաշտօնը կատարէ եւ ծրագիրը ժողովոյ բերէ:


Ատեանը կը գոցուի ժամ 10 1/2 ին:

ԱՏԵՆԱՊԵՏ

Ս. ԱՂԱԲԷԿԵԱՆ

ԱՏԵՆԱԴՊԻՐ

Յ. Հ. ՄԷՐԵԼԻՍ-ԳՈՐԿԻ



Մանուկ-Յիւն. — Այս նրստին ներկայ երեսօտեանաց թիւն էր 33, ինչպէս կ'երևի 362-ը երես 18 սիւնակ 37 տողին մէջ, Բայց 349-ը երես Ա. սիւնակ 4-րդ տողին մէջ՝ տպագրական սխալմամբ 54 գրուած է, զոր պէտք է 55 կարդալ:

*[Faint, mostly illegible Armenian text in the left column, likely bleed-through from the reverse side.]*

*[Faint, mostly illegible Armenian text in the right column, likely bleed-through from the reverse side.]*



ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՍՆՏՈՒԿԻՆ

Կը ծախվի ի Դիւանատան Պատրիարքարանի , եւ կը գտվի  
ամեն գրավաճառաց քով եւ Եկեղեցեաց բանկայնեքը :